Մրցույթ՝ << ՀՀ Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշենի Հ1 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի <<Օտար լեզու>> (Անգլերեն՝15 դասաժամ)), <<Հայոց պատմություն>> (9-ը դասաժամ), <<Համաշխարհային պատմություն>> (3 դասաժամ), <<Իմ հայրենիքը>> (3 դասաժամ), <<Իմ հայրենիքը և աշխարհը>> (3 դասաժամ), <<Հասարակագիտություն>> (2 դասաժամ) և <<Ֆիզկուլտուրա>> (7 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1), 1 լուսանկար 3x4 չափսի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցչի կողմից դպրոցի թափուր տեղի մրցույթին մասնակցելու դեպքում՝ միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ)
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն (մասնակցած լինելու դեպքում).
-«Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի (առկայության դեպքում նաև՝ 2-րդ կետի) պահանջվող համապատասխան փաստաթուղթ.
- «Հանրակրթության մասին»օրենքի 26-րդ հոդվածի 2-րդմասի 3-րդ կետի պահանջին համապատասխան տեղեկանք՝բարձրագույն ուսումնական հաստատությունից:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են 2025 թվականի սեպտեմբերի 8-ից մինչև 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 17:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2025 թ. սեպտեմբերի 24-ին՝ ժամը 12:00-ին**, Վերին Գետաշենի Հ 1 միջն. դպրոցում, հասցե՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ.Վ.Գետաշեն, Բ թղմ.,11 փող.,շ.1: Տեղեկությունների համար զանգահարել (094) 85-95-06 հեռախոսահամարով: